

## ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ)

Արման Հայրապետյանը, 06.08.2014 թվականին դիմելով դատարան, պահանջել է պարտավորեցնել «X» լրատվական գործակալությանը (այսուհետ՝ Ընկերություն) վերջինիս պատկանող օրաթերթի առաջին էջում հերքել Արման Հայրապետյանի վերաբերյալ 05.02.2014 թվականին հրապարակված՝ զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալները, որպես փոխհատուցում վճարել 2.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև բռնագանձել փաստաբանի վարձատրության գումար՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով:

Օրաթերթը յուրաքանչյուր օր լույս է տեսնում 25.000 տպաքանակով, ինչպես նաև համացանցի միջոցով: Օրաթերթի թիվ 185, 05.02.2014 թվականի համարի առաջին էջի աջ կողմում հրապարակվել է տեղեկատվություն հետևյալ բովանդակությամբ. «04.02.2014 թվականին տեղի է ունեցել ավտովթար, որի արդյունքում վրատերթի է ենթարկվել հետիոտն և գույքային վնաս է հասցվել «V» ընկերությանը: Հետիոտնը ստացել է ծանր մարմնական վնասվածքներ: Հավաստի աղբյուրներից ստացված տեղեկատվության համաձայն՝ ավտոմեքենայի ղեկին է եղել հայտնի գործարար Արման Հայրապետյանը, որը ոչ սթափ վիճակում էր և փորձել է փախուստի դիմել դեպքի վայրից, բայց նրան նկատել են ոստիկանության աշխատակիցները և բերման ենթարկել»:

### ՀԱՅՑՎՈՐԻ ՓԱՏՏԱՐԿՆԵՐԸ

Իրականում, 04.02.2014 թվականին Արման Հայրապետյանի մասնակցությամբ տեղի է ունեցել ավտովթար, որի պատճառը ավտոմեքենայի արգելակման համակարգի անսարքությունն էր: Օրաթերթի կողմից հրապարակված հոդվածում տեղ գտած տեղեկատվությունն այն մասին, որ դեպքը տեղի է ունեցել վարորդի ոչ սթափ վիճակում լինելու պատճառով, դեպքի արդյունքում վրատերթի է ենթարկվել ֆիզիկական անձ, ինչպես նաև այն որ Արման Հայրապետյանը փորձել է փախուստի դիմել դեպքի վայրից, իրականությանը չեն համապատասխանում և արատավորում են հայցվորի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը:

Խնդրել է հարգելի համարել իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի բաց թողումը և վերականգնել այն: Մասնավորապես, Օրաթերթում հրապարակված նյութի մասին տեղեկացել է 01.07.2014 թվականին, քանի որ

ավտովթարի հետևանքով մինչև 01.06.2014 թվականը եղել են հոսպիտալացված, իսկ դրանից հետո պարբերաբար այցելել է հիվանդանոց՝ բուժումը շարունակելու նպատակով և չի հետաքրքրվել դեպքի մասին լրատվության անդրադարձներով:

## **ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ՓԱՏԱՐԿՆԵՐԸ**

Օրաթերթի թիվ 185 համարում 05.02.2014 թվականին հրապարակված նյութը չի բովանդակում զրպարտություն, իսկ, նույնիսկ եթե տեղեկատվությունը իրականությանը չի համապատասխանում, Ընկերությունը պատասխանատվություն չի կարող կրել դրա տարածման համար, քանի որ նախորդ դատական նիստի ընթացքում Ընկերության կողմից նշվել է, որ վերոնշյալ տեղեկատվությունը ստացվել է դեպքի վայրի ականատեսից՝ Արման Հակոբյանից, հետևաբար, նշված տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանությունը հիմնավորելու պարտականությունը կրում է Արման Հակոբյանը: Բացի այդ, Ընկերությունը չի կարող պատասխանատվություն կրել հրապարակված տեղեկատվության համար նաև այն պատճառով, որ Հայցվորը երբևէ չի դիմել Ընկերությանը և հերքում չի պահանջել, ինչի հետևանքով Ընկերությունը զրկվել է տեղեկատվությունը հերքելու հնարավորությունից:

Միևնույն ժամանակ, պատասխանողը նշել է, որ հայցվորը բաց է թողել իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը, ինչն, ինքնին, բավարար հիմք է հայցը մերժելու համար:

## **ՀԱՐՑԵՐ**

### **ՀԱՐՑ 1**

Արդյոք տվյալ դեպքում առկա է զրպարտության համար պատասխանատվությունից ազատման՝ տեղեկատվության աղբյուրի բացահայտման պայմանը:

Հիմնավորել պատասխանը՝ անդրադառնալով նաև կողմերի ներկայացրած փաստարկներին:

### **ՀԱՐՑ 2**

Արդյոք պահպանված է իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը: Հիմնավորել պատասխանը:

### **ՀԱՐՑ 3**

Ենթադրենք՝ առկա է զրպարտություն: Տվյալ դեպքում ի՞նչ հանգամանքներ պետք է գնահատման առարկա դարձնի դատարանը փոխհատուցման չափը և

պատասխանատվության տեսակը որոշելիս և ինչու՞ են դրանք կարևոր: Հիմնավորել պատասխանը:

#### **ՀԱՐՑ 4**

Համեմատեք տվյալ իրավական խնդրի փաստական հանգամանքները ստորև ներկայացված փաստական հանգամանքների հետ: Նշեք նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև գնահատեք, թե դրանցից որոնք են գործի լուծման համար էականները:

#### **ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ**

Գևորգ Ղուկասյանը, 02.08.2014 թվականին դիմելով դատարան, պահանջել է պարտավորեցնել «V» լրատվական գործակալությանը (այսուհետ՝ Ընկերություն) վերջինիս պատկանող օրաթերթի առաջին էջում հերքել իր վերաբերյալ 08.03.2014 թվականին հրապարակված՝ զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալները, որպես փոխհատուցում վճարել 2.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև բռնագանձել փաստաբանի վարձատրության գումար՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով:

Օրաթերթը յուրաքանչյուր օր լույս է տեսնում 5.000 տպաքանակով: Օրաթերթի թիվ 185, 08.03.2014 թվականի համարի առաջին էջի աջ կողմում հրապարակվել է տեղեկատվություն հետևյալ բովանդակությամբ. «*«04.03.2014 թվականին տեղի է ունեցել ավտովթար, որի արդյունքում վրաերթի է ենթարկվել հեղինակը և գույքային վնաս է հասցվել «V» ընկերությանը: Հեղինակը ստացել է ծանր մարմնական վնասվածքներ: Հավաստի աղբյուրներից ստացված տեղեկատվության համաձայն՝ ավտոմեքենայի դեկին է եղել նախարար Գևորգ Ղուկասյանը, որը ոչ սթափ վիճակում էր և փորձել է փախուստի դիմել դեպքի վայրից, բայց նրան նկատել են ոստիկանության աշխատակիցները և բերման ենթարկել»:* Շարունակությունը կարդացեք սկզբնաղբյուրում (bba.am լրատվական)»:

Գևորգ Ղուկասյանը հրապարակման մասին տեղեկացել է 02.07.2014 թվականին:

#### **ՀԱՐՑ 5**

1087.1 հոդվածի իմաստով տուժող (զրպարտության կամ վիրավորանքի ենթարկված անձինք) կարող են լինել՝

ա) ֆիզիկական անձինք (այդ թվում՝ անգործունակ, սահմանափակ գործունակ, իրավունակությունը դադարած) և իրավաբանական անձինք.

բ) Միայն ֆիզիկական անձինք (այդ թվում՝ անգործունակ, սահմանափակ գործունակ, իրավունակությունը դադարած).

գ) Գործունակ ֆիզիկական անձինք և իրավաբանական անձինք.

դ) Միայն ֆիզիկական անձինք (այդ թվում՝ անգործունակ, սահմանափակ գործունակ):

**Նշել ճիշտ տարբերակը՝ հիմնավորելով պատասխանը:**